«ՍԳԿԿ» ԻԿԿ Կ ա ր գ ա պ ա հ ա կ ա ն հ ա ն ձ ն ա ժ ո ղ ո վ ի ն ի ս տ ի

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Թ Ի Վ

(Կազմված է «22» մարտի 2024թ. և բաղկացած է 5 (հինգ) էջից)

ք. Երևան, Արշակունյաց 5.108 սենյակ 22.03.2024թ., ժամը 16:00

Համաձայն Արդարադատության նախարարություն մուտքագրված 26.01.2024 թ.-ին Ահարոն Կիրակոսյանի սնանկության գործով կառավարիչ Սուսաննա Ասլանյանի նկատմամբ Արմեն Հակոբյանի ներկայացված թիվ Մ/6217-2024 դիմումը Սուսաննա Ասլանյանի գործողություններում կառավարչի վարքագծի կանոնների խախտման հնարավոր առկայության մասին կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու նպատակով ս/թ.-ի մարտի 22-ին հրավիրված Կարգապահական հանձնաժողովի նիստ:

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝

Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը

Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը

Ահարոն Կիրակոսյանի սնանկության գործով կառավարիչ՝ Սուսաննա Ասլանյանը

Սնանկության գործով դիմումատու՝ Արմեն Հակոբյանը

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝

Հանձնաժողովի Նախագահ՝Արմինե Մովսիսյանը

Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը

Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը

Ահարոն Կիրակոսյանի սնանկության գործով կառավարիչ՝ Սուսաննա Ասլանյանը

Սնանկության գործով դիմումատու՝ Արմեն Հակոբյանը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

Սույն թվականի հունվարի 26-ին Արդարադատության նախարարություն մուտքագրված քաղաքացի Արմեն Հակոբյանի թիվ Մ/6217-2024 դիմումը Ահարոն Կիրակոսյանի սնանկության գործով կառավարիչ Սուսաննա Ասլանյանի գործողություններում կառավարչի վարքագծի կանոնների խախտման հնարավոր առկայության քննարկման հարցը.

ԼՍԵՑԻՆ

Կարգապահական հանձնաժողովի նախագահ Արմինե Մովսիսյանին, ով առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել սնանկության գործով կառավարիչ Սուսաննա Ասլանյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը: Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց բողոքաբերի բողոքը և առաջարկեց սնանկության գործով կառավարիչ Սուսաննա Ասլանյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

Հարցի վերաբերյալ ելույթի ձայն վերցրեց հանձնաժողովի անդամ Արմենակ Ադամյանը և նշեց, որ սնանկության գործով կառավարիչ Սուսաննա Ասլանյանի գործողություններում կարող են տեղ գտած լինել կարգապահական խախտումներ, որոնց քննման և վեր հանման համար անհրաժեշտ է հարուցել Կարգապահական վարույթ և քննել բողոքում առծածված հանգամանքները:

Առաջարկը դրվեց քվեարկության:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ

Ահարոն Կիրակոսյանի սնանկության գործով կառավարիչ Սուսաննա Ասլանյանի նկատմամբ՝ Արդարադատության նախարարություն մուտքագրված քաղաքացի Արմեն Հակոբյանի թիվ Մ/6217-2024 դիմումը սնանկության գործով կառավարիչ Սուսաննա Ասլանյանի գործողություններում «Սնանկության գործով կառավարիչների մասնագիտական վարքագծի Էթիկայի» կանոնների և «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կառավարչի գործողություններում խախտման դեպքերի վերհանման համար հարուցել կարգապահական վարույթ:

ԼՍԵՑԻՆ. – Հանձնաժողովի նախագահ Արմինե Մովսիսյանին, ով առաջարկեց աշխատանքային հետևյալ կարգը՝

1. Լսել բողոքաբեր՝ քաղաքացի Արմեն Հակոբյանին;

2. Լսել Ահարոն Կիրակոսյանի սնանկության գործով կառավարիչ Սուսաննա Ասլանյանին;

3.Ուսումնասիրել բողոքաբերի տրամադրած փաստաթղթերը;

4.Ուսումնասիրել կառավարիչ Սուսաննա Ասլանյանի կողմից ներկայացվող փաստաթղթերը:

Հանձնաժողովի անդամները, սնանկության գործով կառավարիչը համաձայնեցին աշխատանքային կարգին :

Բողոքի վերաբերյալ ելույթի ձայն վերցրեց քաղաքացի Արմեն Հակոբյանը, որը պարզաբանեց, որ 17.06.2019 թ.-ին ՀՀ Սնանկության դատարանի որոշմամբ Ահարոն Կիրակոսյանը (հաշվառման հասցե՝ ք. Երևան, Նուբարաշեն 11 փող. 3-րդ շենք 32 բն., նույնականացման քարտ՝ 004654232, տրված 23.06.2014 թ.-ին 067-ի կողմից) ճանաչվել է սնանկ: Պարտապան Ահարոն Կիրակոսյանի սնանկության գործով կառավարիչ Սուսաննա Ասլանյանը 16.08.2023թ.-ին դիմել է դատարան՝ միջնորդելով թույլատրել Արմեն Կիրակոսյանին վաճառել Ահարոն Կիրակոսյանին բաժնային

վերաբերում է կառավարչի այն փաստարկին, որ պարտապանին պատկանող բնակարանը հանդիսանում է միակ կացարան և տարբերության գումարը բռնագանձման ենթակա չէ, ապա ըստ Արմեն Հակոբյանի դա առուվաճառքի գնի հետ որևէ առընչություն չունի, քանի որ առքուվաճառքի պայմանագրով նախատեսված ամբողջ գումարը պետք է վճարվեր, որից հետո որոշվեր չբռնագանձվող գումարի չափը և այն վերադարձվեր պարտապանին:

Պարզաբանումներ տալու համար ձայն տրվեց սնանկության գործով կառավարիչ Սուսաննա Ասլանյանին: Վերջինս նշեց, որ ի պատասխան 31.05.2023 թ.-ի Ա.Հակոբյանի գրությանը, ինքը հայտնել է, որ դեռևս 20.09.2019 թ.-ին գրությամբ դիմել է ՀՀ ԱՆ ՀԿԱ ծառայությանը Ահարոն Կիրակոսյանին պատկանող անշարժ գույքի, այն է՝ Նուբարաշեն 11 փող. 3-րդ շենք 32 հասցեում գտնվող բնակարանի նկատմամբ կիրառված արգելանքներն ու սահմանափակումները վերացնելու, որպեսզի սեփականության իրավունքը փոխանցվի Արտյոմ Կիրակոսյանին՝ սեփականության իրավունքի գրանցում կատարելու համար: Հարկադիր կատարողի 24.09.2019 թ.-ի որոշմամբ, կարճվել է թիվ 01/01-268/12 կատարողական վարույթը և վերացվել է նշված վարույթով կիրառված արգելանները, այդ թվում՝ 24.08.2010 թ.-ին ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության և Կառլեն Կիրակոսյանի միջև կազմված և վերջինիս ի պահ հանձնված ու միաժամանակ արգելանք դնելու մասին կազմված ակտով շարժական գույքերի նկատմամբ կիրառված արգելանքները վերացվել են: Մինչդեռ իր կողմից ԴԱՀԿ ծառայության ներկայացված գրությամբ ինքը ՀՀ Սնանկության դատարանի 16.09.2019 թ.-ի թիվ ՍՆԴ/0850/04/19 որոշման համաձայն կառավարիչը խնդրել է վերացնել կոնկրետ անշարժ գույքի, այն է՝ բնակարանի նկատմամբ կիրառված արգելանքներն ու սահմանափակումները: Մինչդեռ հարկադիր կատարողի կայացման որոշման մեջ նշված է՝ վերացնել Ահարոն Կիրակոսյանին պատկանող Երևան քաղաքի Նուբարաշեն 11 փող. 3 շենք թիվ 32 բնակարանի, Երևան քաղաքի Նուբարաշեն 11 փող. 2 շենք թիվ 9 բնակարանի և Երևան քաղաքի Նուբարաշեն 11 փող. 3/1 հասցեների նկատմամբ կիրառված արգելանքները: Սուսաննա Ասլանյանը պնդեց, որ Կառլեն Կիրակոսյանը չի հանդիսանում իր պարտապանը և Արմեն Հակոբյանը իրեն ներկայացրել է 24.08.2010 թ.-ին ՀՀ ԱՆ ԴԱՀԿ և Կառլեն Կիրակոսյանի միջև կազմված շարժական գույքերի վերաբերյալ գույքագրման ակտի պատճեն, որը նշված գործի հետ առընչություն չունի: Ինչ վերաբերում է թույլ տրված վրիպակին, ապա Սուսաննա Ասլանյանը 18.10.2023 թ.-ին միջնորդություն է ներկայացրել դատարան՝ 02.10.2023 թ.-ին դատական ակտում թույլ տրված վրիպակը ուղղելու մասին, հայտնելով որ ք. Երևան Նուբարաշեն 11 փող. 2-րդ շենք 9 հասցեի փոխարեն գրվել է ք. Երևան Նուբարաշեն 11 փող. 3-րդ շենք 32 հասցեն, որն անհնարին է դարձնում դատական ակտի կատարումը, որը բավարարվել է:

Ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքով, Սուսաննա Ասլանյանի ՀՀ պետական մարմիններ կատարած հարցումների արդյունքում պարտապան Ահարոն Կիրակոսյանին պատկանող անշարժ և շարժական գույքերց հայտնաբերվել են միայն անշարժ գույքեր: Համաձայն Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԷԴ/3387/02/14 գործի, ըստ հայցի Ահարոն Կիրակոսյանի ընդդեմ Արմեն Հակոբյանի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն բաժնի՝ ք. Երևան Նուբարաշեն 11 փողոց 3/1 հասցեում գտնվող երշիկի արտադրության մեջ օգտագործվող Ահարոն Կիրակոսյանին պատկանող ֆիլե պատրաստող սարք-մասսաժորը արգելանքից հանելու պահանջի մասին վճռել է հայցը մերժել:

սեփականության իրավունքով պատկանող ք. Երևան, Նուբարաշեն 11 փող. 2-րդ շենքի 9 հասցեի բնակարանի 1/5 բաժնեմասը՝ 3,580,000 ՀՀ դրամով, որը բավարարվել է: Արմեն Հակոբյանը շարունակեց, որ Ահարոն Կիրակոսյանից հօգուտ իրեն բռնագանձվել է 25,713,898 ՀՀ դրամ, որից 9,608,940 ՀՀ դրամը որպես կողմերի միջև կնքված փոխառության պայմանագրով ստացված գումար, 16,104,958 ՀՀ դրամը՝ որպես կողմերի միջև կնքված փոխառության պայմանագրի 3-րդ կետով նախատեսված տույժ և 300,000 ՀՀ դրամը՝ որպես հայցվորի կողմից հայցադիմումի համար նախապես վճարված պետական տուրքի գումար: Նշված գործի շրջանակներում ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայությունում 21.08.2010 թ.-ին հարուցվել է թիվ 01/01-2304/10 կատարողական վարույթ, որի շրջանակներում որպես հայցի ապահովում արգելանք է դրվել Ահարոն Կիրակոսյանին պատկանող 14 անուն շարժական և անշարժ գույքերի վրա, որոնց ընդհանուր գումարը կազմել է 9,080,000 ՀՀ դրամ:

15.01.2022 թ.ին Արմեն Հակոբյանը դիմել է կառավարչին, խնդրելով միջոցներ ձեռնարկել 24.08.2010 թ.-ին ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության աշխատակիցների կողմից գույքագրման ակտում ներառված 14 անուն գույքը ընդգրկել Ահարոն Կիրակոսյանի սնանկության գծով պարտապանի գույքի վաճառքի ծրագրում, որին ի պատասխան 31.01.2022 թ.-ին կառավարիչը հայտնել է, որ իր կողմից իրականացվել է պարտապանին սեփականության իրավունքով պատկանող գույքերի և գրավի առարկայի գույքագրման և գնահատման աշխատանքներ և նշված 14 անուն գույքերը նշված հասցեում առկա չեն եղել, իսկ այլ գույք չի հայտնաբերվել: Իսկ 25.02.2022 թ.-ի դրությամբ կառավարիչը հայտնել է, որ 31.01.2022 թ.-ի գրության մեջ «որևէ գույք չի հայտնաբերվել» արտահայտությունը համակարգչային վրիպակ է եղել, որն ըստ Արմեն Հակոբյանի չափազանց կարևոր է սույն գործի շրջանակներում, սակայն դրա վերաբերյալ պարզաբանում չի ստացել: 31.05.2023 թ.-ին Արմեն Հակոբյանը կրկին գրավոր դիմել է կառավարչին, խնդրելով հայտնել, թե ինչ միջոցներ են ձեռնարկվել շարժական գույքերը հայտնաբերելու ուղղությամբ, որին ի պատասխան կառավարիչ Սուսաննա Ասլանյանը 23.06.2023 թ.-ի գրությամբ հայտնել է, որ պետական մարմիններին կատարված հարցումների արդյունքում պարտապանի շարժական գույքեր չեն հայտնաբերվել: Արմեն Հակոբյանը նշեց, որ սույն գործով կառավարիչը թույլ է տվել դիտավորյալ անգործություն՝ շարժական գույքերը հայտնաբերելու ուղղությամբ, հիմնավորելով, որ իր կողմից նշված գույքերի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցման ենթակա չէ, հետևաբար կառավարչի հարցումներին այդ գույքերի մասով պետական որևէ մարմին չէր կարող տեղեկատվություն տրամադրել: Ըստ իրեն՝ կառավարիչը իր անգործությունը հիմնավորում է նաև այն հանգամանքով, որ շարժական գույքերն ի պահ էր ընդունվել քաղաքացի Կառլեն Կիրակոսյանի կողմից, որը չի հանդիսանում իր պարտապանը և ներկայացված գույքագրման ակտը կազմվել է ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության և Կառլեն Կիրակոսյանի միջև: Արմեն Հակոբյանը պնդեց, որ կառավարիչը չի ծանոթացել վերոնշյալ ակտին, քանի որ տեղյակ չէր, որ այդ ակտով գույքագրված և արգելանքի վերցված պարտապանին պատկանող շարժական գույքերը ի պահ են հանձնվել Կառլեն Կիրակոսյանին, այլ ոչ թե այդ գույքերը պատկանում են նրան:

Արմեն Հակոբյանը համաձայն չէր նաև բաշխման ծրագրի հետ, ըստ որի Ահարոն Կիրակոսյանի հաշվարկային մնացորդը 11.10.2023 թ.-ի դրությամբ կազմել է 2,600,000 ՀՀ դրամ, այն դեպքում, որ պարտապանին պատկանող բաժնեմասը օտարվել է 3,580,000 ՀՀ դրամով: Ինչ

Արմեն Հակոբյանի ներկայացրած մյուս դիրքորոշումները Սուսաննա Ասլանյանը դիտարկեց, որպես վերջինիս անձնական կարծիք, որը իրավական հիմք չունի:

Ապացուցողական բոլոր փաստաթղթերը հանձնվեցին հանձնաժողովի նախագահ Արմինե Մովսիսյանին և հանձնաժողովի անդամներին: Հանձնաժողովի անդամները համաձայնեցին այն մտքին, որ ներկայացված փաստական հանգամանքները բավական են, որ սնանկության գործով կառավարիչ Սուսաննա Ասլանյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ կայացվի ժողովի որոշում:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ – 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ահարոն Կիրակոսյանի սնանկության գործով կառավարիչ Սուսաննա Ասլանյանի գործողություններում չկան խախտումներ, վերջինս գործել է ՀՀ Օրենսդրության շրջանակներում, առկա չեն «Սնանկության գործով կառավարիչների մասնագիտական վարքագծի Էթիկայի» կանոնների խախտման դեպքեր, ուստի /մեղքի/ բացակայության պատճառաբանությամբ հարուցված Կարգապահական վարույթը կարճել:

2.Սույն Որոշումը և նյութերը ներկայացնել «ՍԳԿԿ» ԻԿԿ համապատասխան կառավարման մարմնի հաստատմանը:

Հանձնաժողովի նախագահ՝ Արմինե Մովսիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ռուբեն Խալաթյան

Արմենակ Ադամյան

Հարություն Գևորգյան